ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 38 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ `ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՌՈՒՄՆԵՐԸ

ԿԱՏԱՐՈՂ՝ ԿԱՐԻՆԵ ԲՈՐԻՍԻ ԲԱՂԻՅԱՆ

/ԱՆՈՒՆ,ԱԶԳԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ/

«ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 29 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

/ԴՊՐՈՑ ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԽՄԲԻ/

ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԻՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

/ԱՆՈՒՆ,ԱԶԳԱՆՈՒՆ /

ԳՅՈՒՄՐԻ 2022թ.

Բովանդակություն

Ներածություն……..……4

§ 1 Պահպանողականություն (կոնսերվատիզմ)…….....7

§ 2Ազատականություն (լիբերալիզմ)…….....9

§ 3Ընկերավարություն (սոցիալիզմ)…….....13
ա Կոմունիզմ…….……..

բ Ֆաշիզմ…….……

գ Սոցիալ-դեմոկրատիա……..…….

դ Անարխիզմ…….

Ամփոփում…….……14
Աղբյուրներ և գրականություն…….....15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն աշխատանքի նպատակն է ներկայացնել քաղաքականգաղափարախոսությունը որպես մշակույթի արդյունք և մշակույթն ուղորդող երևույթ:

Գաղափարախոսությունը սահմանվում է որպեսգաղափարների և հայացքների համակարգ, որն արտացոլում է արտաքին միջավայրի և մարդկանց խմբերի նկատմամբ վերաբերմունքը և վերաբերվում է հասարակական հարաբերությունների ու դրա առանձին ոլորտների պահպանմանը, զարգացմանն ու վերափոխմանը: Գաղափարախոսություն տերմինը առաջացել է 17-րդ դարում: Այն առաջին անգամ շրջանառության մեջ դրեց Անտուան դե Տերեսին քաղաքական ենթատեքստով: Սակայնգաղափարախոսությունը կարող է վերաբերվել հասարակական կյանքի յուրաքանչյուր ոլորտին:

Գաղափարախոսությունները սկսեցին առաջանալ 14-րդ դարից՝ Վերածննդի դարաշրջանում, երբ առաջին անգամ ի հայտ եկավ հասարակական ճգնաժամը: Աշխարհի մասին կրոնական պատկերացումները փոխվեցին ռացիոնալ պատկերացումներով: Այդ ճանապարհին առաջին քայլը Ռեֆորմացիան էր: Այժմ հասարակական կարգը չէր պահպանվում կրոնականգաղափարախոսությամբ, այլ հիմնված էր քաղաքացիների համաձայնության վրա, որոնք իրենց իրավունքների և ազատությունների համար ստեղծում են պետություն:

Գաղափարախոսության առաջացման օրիցգիտության մեջ ձևավորվեցին տարբեր հայացքներ նրա կառուցվածքի և այն հոգևոր ազդեցության վերաբերյալ, որն արտացոլվում է հասարակության քաղաքական շրջանում:

Քաղաքականգաղափարախոսությունը իրենից ներկայացնում է հոգևոր կրթություն, որը քաղաքացիների վարվելակերպի նպատակային նգաղափարական կողմնորոշումն է: Պետք է տարբերելգաղափարախոսության հետևյալ մակարդակները.

1. տեսական ըմբռնման – ձևակերպվում են հիմնական դրույթները, որոնք բացահայտում են որևէ խմբին պատկանող արժեքներն ուգաղափարները: Այս մակարդակը կարելի է համարել խմբի քաղաքական փիլիսոփայությունը:
2. քաղաքական-ծրագրային – սոցիալ-քաղաքական սկզբունքները նգաղափարները վերածվում են ծրագրերի՝ ստեղծելով կանոնակարգված հիմք կառավարման որոշումներ ընդունելու համար և խթանելով քաղաքացիների քաղաքական վարքագիծը: Ծրագրերը ստեղծվում են քաղաքական պայքարի համար: Այս մակարդակում ստուգվում էգաղափարների կենսունակությունը: Քանի որ այս մակարդակը վերաբերում է կառավարությանգործողություններին, քաղաքական իրադարձություններիգնահատմանը, ապա այստեղ կարող են ինչպես տարբերգաղափարախոսություններ մոտենալ իրար, այնպես էլ միևնույնգաղափարախոսության մեջ կարող է պառակտում առաջանալ:
3. ակտուալացման - բնութագրում է քաղաքացիների կողմից տվյալգաղափարախոսության նպատակների ու սկզբունքների ընկալման աստիճանը, ինչպես նաև այդ նպատակների ու սկզբունքների իրականացումը իրենց պրակտիկգործողություններում:

Հասարակական կարծիքի վրագաղափարախոսությունների ազդեցության անկումը կամ տեխնոկրատական պատկերացումների տարածումը տանում է քաղաքականության ապագաղափարախոսացմանը:

Գաղափարախոսությունները ձևավորվում են էլիտայի ներկայացուցիչների կողմից: Յուրաքանչյուրգաղափարախոսություն ուղղված է որոշակի արժեքների հիմնավորմանը: Քաղաքականգաղափարախոսության ստեղծած արժեքները սկսվում են կիրառվել ոչ միայն քաղաքական ասպարեզում, այլև հասարակականգործունեության տարբեր ոլորտներում (կրթություն,գիտություն, արվեստ, տնտեսություն և այլն): Արժեքներն ու շահերը ուղղորդում են հասարակականգործունեությունը:

Ոչ քաղաքականության, ոչ էլ տնտեսության մեջ չեն իրականացում հասարակության նպատակները: Հասարակության նպատակները իրականացվում են մշակույթում: Բայց մշակույթը մի կողմից պայմանավորում է քաղաքականության, տնտեսության ևգործունեության այլ ոլորտների բնույթը, մյուս կողմից ենթարկվում է նրանց ազդեցությանը:

Որոշ դեպքերում մշակույթը հասկանում են որպեսգործունեության տեխնոլոգիա, միջոց: Այս մոտեցման շնորհիվ առաջացել է մի պատկերացում, ըստ որի՝ մշակույթը քաղաքականգործունեության իրականացման միջոց է: Այս մոտեցման սահմաններում պատմականորեն պայմանավորված որոշակի հասարակական կազմակերպության տիպ ստեղծում է մշակույթի որոշակի տիպ:

Քաղաքականգաղափարախոսությունը հասարակականգիտակցության կարևոր մասն է կազմում: Հանդեսգալով որպես ամբողջգաղափարական համակարգի առանցքային կառուցվածք՝ քաղաքականգաղափարախոսությունը կարևոր դեր է կատարում հասարակության քաղաքական կյանքում:

Հնարավոր չէ նշել մեկ հասարակություն, որը միաժամանակ մեկ քաղաքականգաղափարախոսություն ունենար: Նույնիսկ առանձին անհատներն այդ հասարակության մեջ կարող են միաժամանակ մի քանիգաղափարախոսություն կրել: Դա կարելի է տեսնել ՌԴ-ում և ԱՄՆ-ում կատարված սոցիոլոգիական հարցումներում:

Այս աշխատանքը արդիական է, քանի որ նախ քաղաքականգաղափարախոսությունը մշակութաբանության տեսանկյունից ուսումնասիրված չէ, բացի այդ յուրաքանչյուրգաղափարախոսություն մշակութային ֆենոմեն է: Քաղաքականգաղափարախոսությունը համարվում էգաղափարախոսությունների առանցքը: Այն ստեղծում է հայրենիք, նաև ինքնագիտակցության մի տիպ, որ կապվում է քաղաքական կազմակերպության հետ՝ կուսակցական կամ պետական, և նույնիսկ վերպետական մակարդակով:

Քաղաքականգաղափարախոսությունը ստեղծվում է հասարակական կառավարման համար, ուստի հենվում է հասարակության մեջգոյություն ունեցող հիմնական արժեքների վրա: Սակայն ստեղծված լինելով էլիտայի կողմից՝ քաղաքականգաղափարախոսությունն ինքն էլ ուղորդողի դեր է կատարում: ՈՒստի այս խնդիրը արդիական է, մանավանդ որ նոր քաղաքականգաղափարախոսությունների ստեղծումը շարունակվում է նաև այսօր:

Այս աշխատանքը կազմված է ներածական մասից, 3 պարագրաֆներից՝ պահպանողականություն, ազատականություն, ընկերավարություն, և ամփոփումից:

§ 1-ում խոսվում է կոնսերվատիզմի ծագման և նրա հիմնական սկզբունքների մասին: Ինչպես նաև նշվում են նրա տեսակները, տարբերգիտնականների կարծիքները այդ տեսակների մասին:

§ 1-ում նաև փորձ է արված նշել կոնսերվատիզմի դրական և բացասական կողմերը:

§ 2-ում ներկայացված են լիբերալիզմի հիմնականգաղափարները, հիմնադիրների անունները, նրա տեսակները:

Սոցիալիզմը բաժանվում է մի քանի տեսակների՝ կոմունիզմ, սոցիալ-դեմոկրատիա, ֆաշիզմ, անարխիզմ: § 3-ում տրված են սոցիալիզմի տեսակների ընդհանուր բնութագիրը:

Աշխատանքը վերջանում է ամփոփումով:

§ 1 ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԿՈՆՍԵՐՎԱՏԻԶՄ

Կոնսերվատիզմը ծագել է անմիջապես լիբերալ հոսանքի հետ միասին որպես հակաազդեցություն: Կոնսերվատիզմ տերմինը առաջին անգամ օգտագործել է Ֆ. Շատոբրիանը XVIII դարի վերջին: Կոնսերվատիզմը իրենից ներկայացնում է երկակի հոգևոր ազդեցություն: Մի կողմից այն հոգեբանական սահմանում ունեցող մտածողության ձև է, որը կապված է իներցիայի և սովորության դոմինանտության, որոշակի խառնվածքի,գիտակցության պաշտպանական համակարգի հետ, որըգերադասում է կառավարման նախորդ համակարգը՝ անկախ վերջինիս բովանդակությունից ու նպատակից: Մյուս կողմից կոնսերվատիզմը կյանքի և քաղաքականության մեջ վարքի համապատասխան մոդել է և յուրօրինակգաղափարական կողմնորոշում իր փիլիսոփայական հիմքով, որը պարունակում է հայտնի կողմնորոշիչներ և սկզբունքներ քաղաքական մասնակցության, պետության նկատմամբ վերաբերմունքի, հասարակական կարգի մասին և որը կապվում է կոնկրետ քաղաքականգործընթացների, միությունների, կուսակցությունների հետ:

Որպեսգաղափարախոսություն կոնսերվատիզմը էվոլյուցիայի է ենթարկվել: Սկզբում այն պաշտպանվում էր խոշոր ֆեոդալ-արիստոկրատական շերտերից, իսկ հետագայում նաևգործարարների դասից և լիբերալիզմի հիմնադիր դրույթներից (մասնավոր սեփականությունից, հասարակականգործունեությունում պետության միջամտության բացակայությունից և այլն): Դասական առումով հանդես էգալիսգոյություն ունեցող կարգերի, պատկերացումների և դրանց երաշխիքը հանդիսացող պետության պաշտպանությամբ:

Այդ պատկերացումների ստեղծման համար նախադրյալ հանդիսացան լիբերալների կողմից 1789 թ.-ի Ֆրանսիական Մեծ հեղափոխությունից հետո հասարակությունը վերափոխելու փորձերը: Կոնսերվատիզմի հոգևոր հայրեր Ժ. դե Մեստրը, Լ. դե Բոնալդը, Է. Բյորկը, հետագայում նաև Խ. Կորտեսը, Ռ. Պիլը, Օ. Բիսմարկը և ուրիշները փորձեցին հաստատել սոցիալական կարգերիգիտակցական բարեփոխման հակաբնականության միտքը:

Կոնսերվատորները ելնում են մարդու նկատմամբ հասարակության առաջնությունից. ՝Մարդիկ անցնում են, ինչպես ստվերները, բայց հավերժ է հանրային շահը՝ (Բյորկ): Նրանց կարծիքով մարդու ազատությունը որոշվում է հասարակության նկատմամբ նրա պարտականություններով, նրա պահանջներին հարմարվելու ընդունակությամբ: Քաղաքական խնդիրները նրանք դիտում էին որպես կրոնական և բարոյական խնդիրներ, իսկ բարեփոխումներիգլխավոր հարցը տեսնում էին մարդու հոգևոր այլակերպության մեջ, որը օրգանապես կապված էր ընտանիքի, եկեղեցու և բարոյական արժեքները պահպանելու նրա ընդունակությամբ: Ներկայում անցյալի պահպանումը ընդունակ է հանելու, ինչպես նրանք էինզտնում, ողջ լարվածությունը և պետք է դիտվի իբրև բարոյական պարտքգալիք սերունդների համար: Աթեիզմը, հավասարությունը, անհատականությունը, ռելատիվիզմը,գիտակցության պաշտամունքը նրանց համար հակաարժեքներ էին, որոնք կործանում էին հասարակության միասնությունը:

Այդպիսով կոնսերվատորական հայացքների համակարգը հենվում էր ժառանգականության առաջնության, ընդունված կարգերի պահպանման վրա: Այս մոտեցման հետևանքով ձևավորվեցին և ամրապնդվեցին կոնսերվատորներիգաղափարախոսության քաղաքական կողմնորոշիչները, հատկապես վերաբերմունքը սահմանադրության՝ որպես բարձր սկզբունքի նկատմամբ, որը իրականացնում է չգրված աստվածային օրենքը և չի կարող մարդու կողմից կամայականորեն փոխվել: Կոնսերվատորները աստվածացնում են պետության դերը հասարակության կյանքում, պետության ծագումը վերագրում էին Աստծո նախախնամությանը: Նրանք ասում էին, որ պետության դեմ դուրսգալը աստվածապղծություն է: Է. Բյորկը նույնիսկ

ասում էր, որ մարդիկ անցնում են, ինչպես ստվերները, բայց ընդհանուր շահը հավերժ է: Փաստորեն հասարակական կարևոր ոլորտները պիտիգտնվեն պետության հսկողության տակ:

'Կոնսերվատորը մտածում է 'մենք' կատեգորիայով, այն ժամանակ երբ լիբերալը մտածում է 'ես' կատեգորիայով: Լիբերալը վեր է լուծում և մեկուսացնում է մշակույթի տարբեր բնագավառները, իսկ կոնսերվատորը ձգտում է ընդհանրական և համադրական մոտեցման',- նշել է Կ. Մանհեյմը:

Ըստ կոնսերվատորների՝ քաղաքական կարգի հիմքում ընկած է աստիճանական բարեփոխումը՝ հենվելով փոխզիջման վրա: Ժամանակակից անգլիացի կոնսերվատոր Ժ. Գիլմորը գրել է. 'Հետևողականությունը երբեք չի եղել տորիի արժանապատվությունը, և այն չկա ոչ մի քաղաքական կուսակցության մեջ: Բայց ուրիշ կուսակցություններըգտնում են, որ նրանք պետք է հետևողական լինեն: Մենք հակառակում ենք համոզված: Սկզբում մենք պաշտպանում էինք պրոտեկցիոնիզմը (հովանավորչությունը), հետագայում՝ ազատ ձեռնարկությունը, ավելի ուշ նորից պրոտեկցիոնիզմը և նորից ազատ ձեռնարկությունը՝ կապված տնտեսական իրավիճակից: Մենք պաշտպանում էինք անհատին կամ պետությանը, որովհետև պետությունը և անհատը փոխվում են, և երբ մեզ ասում են, թե մենք հանկարծ դարձել ենք պետության 'թշնամիներ', պատասխանում ենք, որ այն պետությունը, որին մենք պաշտպանում էինք հարյուր տարի առաջ, արդենգոյություն չունի':

XX դարի 70-ական թվականների առաջին կեսին կոնսերվատիզմը սկսեց հանդեսգալ նեոկոնսերվատիզմի քողի տակ: Նրա առավել հայտնի ներկայացուցիչներ Ի. Կրիստոլը, Ն. Պադգարեցը, Դ. Բելլը, Զ. Բժեզինսկին և ուրիշները ստեղծեցինգաղափարների մի շարք, որոնք այդ ժամանակի տնտեսական ճգնաժամը հաղթահարելու միջոց էին: Կոնսերվատիզմի այս ձևը հարմարեցրել է ավանդական արժեքները արևմտյան հասարակության ուշ ինդուստրիալ զարգացման փուլի հետ:

Ըստ նեոկոնսերվատորների՝ պետք է ձգտել պահպանել հասարակության ամբողջականությունը, որպեսզի ապահովի անհատին կյանքի պայմաններով, որը հիմնված կլինի օրինականության և կարգապահության վրա, որը հնարավորություն կտա քաղաքացիներին ստեղծելու քաղաքական միություններ, նպաստելու քաղաքացիական հասարակության զարգացմանը: Եվ չնայած այդ մոդելը նախընտրում էր հասարակության և քաղաքացու փոխազդեցության դեմոկրատական սկզբունքը, այնուամենայնիվ նեոկոնսերվատորները պնդում էին հասարակության ղեկավարման ուժեղացումը:

Կոնսերվատիզմը Եվրոպայում հին և ազդեցիկգաղափարախոսություններից է: Սակայնգիտության մեջ միասնական կարծիք չկա նրա բնորոշ առանձնահատկությունների մասին: Օրինակ՝ Ա. Ա. Ֆրենկինը առանձնացնում է կոնսերվատիզմի երեք տեսակ՝ լիբերալ, չափավոր և աջ կոնսերվատիզմ: Կ. Վիդենկոպֆը խոսում է կոնսերվատիզմի երկու տիպի մասին՝ արժեքային և կառուցվածքային կոնսերվատիզմ:

Կոնսերվատիզմը դիտարկում են նեղ և լայն իմաստով:

Լայն առումով կոնսերվատիզմը հավերժ աշխարհայացք է:

Ն. Ա. Բերդյանը գրում էր. 'Կոնսերվատիզմը պահպանում է ժամանակների միջև կապը, թույլ չի տալիս նրանց միջև վերջնական խզումը, կապում է անցյալը ապագայի հետ': Բերդյանին է պատկանում նաև այն միտքը, որգոյություն ունի նաև վատ կոնսերվատիզմ, որը ուշացնում է ստեղծագործական առաջընթացը:

Կոնսերվատիզմի սկզբունքը համարվում է հասարակության ակունքների և մշակույթի ուսումնասիրումը:

Կոնսերվատիզմիգլխավոր խնդիրն է իրականացնել մշակութային արժեքների վերահաղորդում, պահպանել հասարակության մեջ կայունություն: Դրանում է կոնսերվատիզմի մշակութային նշանակությունը և ուժը:

Համաձայն Ա. Ա. Խամյակովի՝ կոնսերվատիզմը մշտական կատարելագործումն է, որը միշտ հենվում է զտող հնության վրա:

Ըստ կոնսերվատիզմիգաղափարախոսության՝ զարգացում կարելի է ապահովել՝ հենվելով ավանդականության՝ տրադիցիոնիզմի վրա:

Յուրաքանչյուր անհատ իր մեջ կրում է այդ տրադիցիոնալիզմը, բայց այն դառնում էգաղափարախոսություն, երբ ավանդական մշակույթին շատ մեծ վտանգ է սպառնում:

§2 ԱԶԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ(ԼԻԲԵՐԱԼԻԶՄ)

Ժառանգելով հին հույն մտածողներ Լուկրեցիոսի և Դեմոկրիտիգաղափարները՝ լիբերալիզմը որպես ինքնուրույնգաղափարական հոսանք ձևավորվել է անգլիացի լուսավորիչներ Ջ. Լոկկի, Թ. Հոբսի, Ջ. Միլլի, Ա. Սմիթի քաղաքական փիլիսոփայության հիմքի վրա XVII-XVIII դարերում: Կապելով անձի ազատությունը մարդու հիմնական իրավունքների, ինչպես նաև մասնավոր սեփականության հետ՝ իր կոնցեպցիայի հիմքում դրեց ազատ մրցակցության, շուկայի, ձեռնարկությանգաղափարները: Հասարակության զարգացման հիմքը դարձավ անձի ազատությունը:

Դրա հետ կապված՝ լիբերալիզմի քաղաքականգաղափարներն էին քաղաքացիների իրավունքների հավասարությունը, պետության դաշնագրային բնույթը, ինչպես նաև ավելի ուշ ժամանակներում ձևավորվեց մի համոզմունք, ըստ որի՝ ՝քաղաքական, տնտեսական, կրոնական մրցող կազմակերպություններից ոչ մեկը՝ քաղաքականության մեջ չի կարող ունենալ ՝բարոյական առավելություն ևգերիշխանություն մյուսների վրա՝: Ինչպես նշում է Ի. Վալերսթայնը, եթե սոցիալիստների համարգաղափարական նախագծերումգլխավորը նպատակն էր, իսկ կոնսերվատորների համար՝ փոփոխությունների դադարը՝ կապված անցյալի իդեալների հետ, լիբերալների համար, որոնք բացասաբար էին վերաբերվում ՝առաջընթաց՝, ՝պատմության օրենքներ՝ հասկացություններին,գլխավորը կյանքի ընթացքի արժեքի և փոփոխությունների ռացիոնալությանգիտակցումն է:

Առաջացման օրից լիբերալիզմը բացասական վերաբերմունք ուներ պետության նկատմամբ, ընդունում էր քաղաքացիների քաղաքական պարտականությունները, կրոնական հանդուրժողականությունը, պլյուրալիզմը, սահմանադրականությանգաղափարը: Իրգաղափարական էվոյուցիայի ողջ ընթացքում լիբերալիզմը փորձում էրգտնել այն թույլատրելի սահմանը, որով կարող էր ներխուժել անհատի անձնական կյանք: Ջոն Լոկը ասում էր, որ հասարակությունը, դրա տարբեր միավորումները, այդ թվում պետական հաստատությունները ստեղծում են մարդիկ իրենց ազատ կամքով և իրենց նպատակներին ծառայեցնելու համար, և եթե դրանք չեն ծառայում, պետք է փոխել: Լիբերալները մերժում էին պետության ամբողջատիրությունը և սահմանափակում էին նրագործառույթները իրավական և անվտանգությանգործառույթներով: Ջոն Միլլը նույնիսկ ասում էր, որ յուրաքանչյուր քաղաքացի պետությունից լավգիտի, թե ինչ է իրեն հարկավոր և ինչպես կարող է իր ուզածը ձեռք բերել, ուստի պետությունը չի կարող այդ հարցերում կարևորություն ունենալ:

XX դարի սկզբին ավանդական լիբերալիզմի կողքին ձևավորվեցին ուղղություններ, որոնք փորձեցին միավորել լիբերալների հիմնականգաղափարները նորգաղափարների հետ:

Լիբերալիզմի հիմնականգաղափարների ամենաակտիվ պաշտպանը դարձավ լիբերտալիզմը, որը ժխտում էր նրա ներքին փոփոխությունների հնարավորությունը: Լիբերտալիզմի ակնառու ներկայացուցիչներ Ֆ. Հայեկը և Լ. Միզեսը կարծում էին, որ յուրաքանչյուր տնտեսական պլանավորում տանում է քաղաքական դիկտատուրայի, իսկ հասարակական զարգացմանգլխավոր դիլեմման պետք է տեսնել պլանավորման (տիրանիայի ձևով) և մրցակցության (ազատության խորհրդանիշ) միջև:

Պետության կառավարման ուժեղացումը և սոցիալական նպատակների բարձրացումը ստեղծեցին նեոլիբերալիզմը, որը հարմարեցրել է լիբերալիզմի ավանդական արժեքները XX դարի երկրորդ կեսի քաղաքական և տնտեսական իրադարձությունների հետ: Նեոլիբերալների քաղաքական ծրագրի հիմքում ընկած էին քաղաքականգործընթացում մասսաների մասնակցության, կառավարական որոշումներ իրականացնելուգործընթացի դեմոկրատացմանգաղափարները: Եթե նախկինում քաղաքական կյանքում դեմոկրատիան մեխանիկաբար որոշվում էր մեծամասնությամբ, ապա նեոլիբելարներըգերադասեցին առավելություն տալ քաղաքական իշխանության իրականացման ու կազմակերպման

պլյուրալիստական ձևերին: Ռ. Դալը, Չ. Լինդբլյումը և ուրիշ նեոպլյուրալիստներ կարծում են, որ որքան ավելի թույլ է մեծամասնության իշխանությունը, այնքան ավելի համապատասխան է լիբերալիզմի սկզբունքներին:

Լիբերալները դեմ են պատերազմին: Նրանց կարծիքով պատերազմ կարելի է հայտարարել միայն ինքնապաշտպանության համար:

Լիբերալիզմը որոշ առումով մերժում է այնպիսի ոլորտների պետական կարգավորումը, ինչպիսիք են արվեստը,գրականությունը,գիտական շրջաններիգործունեությունը, ազարտային խաղերը, մարմնավաճառությունը, ալկոհոլի ու թմրանյութերի օգտագործումը և այլն:

Ռոբերտ Բյորկը դուրս էգալիս ՝աջ՝ լիբերալների հավասարության և ազատության կեղծ մեկնաբանությունների դեմ: Ըստ նրա՝ հնարավորությունների մասին դասական պատկերացումը համարվում է ոչ բավարար, թելադրված հասարակության բուրժուական կառուցվածքի կողմից: Ռ. Բյորկի կարծիքով այդ հավասարությունը բազմաթիվ աղետների է բերում՝ բացառվում է տաղանդի, աշխատասիրության, ընդունակությունների նգիտելիքների դերը աշխատանքում, ուսման մեջ և վերջապես մշակույթում: Դրա հետ մեկտեղ Եվրոպական մշակույթը արմատականների կողմից ճանաչվում է հեղինակային. նրա փոխարեն առաջ էգալիս մուլտիկուլտուրալիզմը, այսինքն՝ համարժեք մշակույթների բազմազանությունը:

Դրա հետևանքով բազմաթիվ համալսարաններում ազգային փոքրամասնությունները ուսումնասիրում են ամեն մեկը իր առասպելական և անպայման ՝վեհ՝ մշակույթը, որի հետևանքով չեն ծանոթանում ժամանակակից եվրոպական մշակույթի ձեռքբերումներին:

Դպրոցներում և համալսարաններում, նշում է Ռ. Բյորկը, նվազում են ուսուցման պահանջները: Որոշ համալսարաններում ուսանողները և դասախոսները հանդես ենգալիս հավասար, որի հետևանքով դասախոսները խուսափելով կոնֆլիկտներից, ամեն ինչում զիջում են ուսանողներին:

Ռ. Բյորկի կարծիքով մեծանում են բոլոր կարգի փոքրամասնությունները: Ամերիկան, ըստ Ռ. Բյորկի, դարձել է ՝զոհերի ազգ՝:

Լիբերալգաղափարախոսության սաղմերը կարելի է փնտրել Վերածննդի արվեստում: Հակադրվելով քրիստոնեական դոգմատիկ մտածողությանը՝ այն իր նախնական ձևակերպումներում ծայրահեղ բնույթ ուներ: Լիբերալգաղափարախոսության առաջացման պատճառ կարելի է համարել նոր ձևավորվող կապիտալիստական հարաբերությունները: Այս պատճառով սկզբում այն էլիտայիգաղափարախոսությունն էր: Լիբերալգաղափարների ընդունումը և կիրառումը հասարակության կողմից երկարատևգործընթաց էր և հասել է մինչև 20-րդ դար: Լիբերալգաղափարախոսության արդյունք է ֆեմինիստական շարժումը, մշակութային և անհատական հանդուրժողականության տարածումը և այլն:

Լիբերալգաղափարների ընդունումը հասարակության կողմից միանշանակ բացասական երևույթ չի կարելի համարել: Նախ կարևոր է նշել, որ որևէ քաղաքականգաղափարախոսություն միանշանակ չի ընդունվում հասարակության և նույնիսկ առանձին անհատների կողմից:

§ 3 ԸՆԿԵՐԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՍՈՑԻԱԼԻԶՄ

Սոցիալիստականգաղափարները աշխարհին վաղուց են հայտնի:

Սոցիալիզմիգաղափարախոսությունը հանդես էգալիս Թոմաս Մորի և Թոմազա Կամպանելայի մոտ:

Սոցիալիզմը որպեսգաղափարախոսություն ձևավորվում է XIX դարի սկզբներին Սեն-Սիմոնի, Ֆաբյերի, Օուենի կողմից:

Սոցիալիզմի տարատեսակներն են կոմունիզմը, ֆաշիզմը, սոցիալ-դեմոկրատիան, անարխիզմը:

ա) Կոմունիզմ

Մարքսը և Էնգելսը տվեցին սոցիալիզմի տեսական բացատրությունը՝ մեկնաբանելով այն որպես հասարակության զարգացման առավել հեռավոր փուլ՝ կոմունիզմ, որը ներկայացնում է մարդկության զարգացման իրական նպատակը:

Մարքսիզմը իրենից ներկայացնում էր խիստ արմատականգաղափարախոսություն, որը շեշտը դնում էր <<լուսավոր կոմունիստական ապագայի>> ստեղծման հեղափոխական մեթոդին: Սոցիալիստական իրականության ստեղծման համար հեղափոխական, բռնի մեթոդներիգերիշխումըգալիս էր մարքսիզմից: Պատմական առաջընթացի սխեման խիստ միակողմանի էր և հանգում էր հ հասարակական փոփոխությունների պլանավորմանը նյութական արտադրության մակարդակով, ներառած մշակութային, հոգեբանական և այլգործոնները:

Ողջ պատմական առաջընթացն ընկալվում էր որպես հանրային-տնտեսական ֆորմացիաների հաջորդական հերթափոխում: Կոմունիզմի քաղաքական իդեալը հասարակական ինքնակառավարումն է, որը ենթադրում էր բնակչության ընդհանուր մասնակցությունը կառավարման որոշումներ կայացնելուգործընթացում:

Ըստ կոմունիզմի կատարելատիպի՝ կոմունիզմի առաջին փուլը սոցիալիզմն էր, որից անցում էր կատարվում երկրորդ փուլ՝ բուն կոմունիզմին: Կոմունիզմի հիմնական թերությունն այն էր, որ մերժում էր մարդկանց բնական անհավասարությունը:

Նոր հասարակությունը բնութագրվում էր նոր մարդու առկայությամբ, որն արհամարհում էր նյութական շահը, հիմնվում էր բարոյական այնպիսի պատկերացումների վրա, ինչպիսին է <<ընդհանուր բարորության համար կատարված աշխատանքից հաճույք ստանալը>>:

Մարքսիստական ուսմունքի ներքին հակասությունների հետևանքով պայմանավորվեց դրա հետագագաղափարական զարգացումը:

Չնայած իրգաղափարների բռնի տարածմանը՝ կոմունիստներն իրականացնում էին մշակույթի խիստ վերահսկողություն:

Կոմունիստականգաղափարախոսությունը հովանավորում է մշակույթը, բայց սահմանափակում է նրա զարգացումը: Հանդես էգալիս բանվոր դասակարգի նգյուղացիների պաշտպանությամբ, հետևաբար մեծ ուշադրություն է դարձնում հատկապես այդ խավերի մշակույթի զարգացմանը:

բ) Սոցիալ-դեմոկրատիա

Մարքսիզմի մյուս էվոլյուցիոն ճյուղը կապված էգերմանացի տեսաբաններ Կ. Կաուցկիի, Ա. Բեբելի, Է. Բեռնշտեյնիգործունեության հետ, որոնք դրականգնահատեցին պետության դերը սոցիալապես արդար հասարակության ստեղծմանգործում: Նրանք կողմնակից էին նպատակին հասնելու խաղաղ միջոցներին, դասային համերաշխությանը:

Սոցիալիզմիգլխավոր արժեքը ոչ թե ազատությունն է, կայունությունը կամ հավասարությունը, այլ արդարությունը: Արդարություն նշանակում է անհատական ազատության և հասարակական հավասարության, հասարակական կարգի և բարեփոխման համադրում:

Սոցիալիստները դեմոկրատիան հասկանում են հասարակական արդարության պահպանման միջոց և այն տարածում են ոչ միայն քաղաքական, այլև տնտեսական և հասարակական ոլորտ:

Է. Բեռնշտեյնի կարծիքով պետությունը հասարակությունը կառավարող օրգան է, որը դեմոկրատիայի ամրապնդման և համընդհանուր ընտրական իրավունքի հաստատման հետևանքով կորցնում է իր դասային բնույթը, դառնում է վերդասային և արտահայտում է հասարակության բոլոր անդամների շահերը: Ընդ որում՝ պետական իշխանությունը պետք է բաժանված լինի գործադիր, օրենսդիր, դատական իշխանությունների և պետք է հենվի պառլամենտական դեմոկրատիայի զարգացած ինստիտուտների վրա: Աշխատավորների բարորության մակարդակի բարձրացման, նրանց սոցիալական ապահովության նպատակով պառլամենտական դմոկրատիայի հնարավորությունների օգտագործումը հանդիսանում է առաջնային խնդիր ժամանակակից սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների համար:

Է. Բեռնշտեյնի տեսական նորությունները միջազգային սոցիալ-դեմոկրատիայի քաղաքական ուսմունքը դարձան:

Միջազգային սոցիալ-դեմոկրատիայի քաղաքական տեսության և պրակտիկայի մեջ կարևոր ներդրում է համարվում ՝սոցիալական պետության՝ ըմբռնումը: Հասարակական առաջընթացը հնարավոր է միայն ձեռնարկատերերի և վարձու աշխատավորների համագործակցության շնորհիվ: Բացի այդ յուրաքանչյուր կողմ պետք է հաշվի առնի մյուսի շահերը: Տնտեսական կարգավիճակի բարձրացման պայքարում վարձու աշխատավորները չպետք է անցնեն այն սահմանները, որոնք բացառում են անհատ ձեռներեցների տնտեսականգործունեության շահավետությունը: Իրենց հերթին ձեռնարակտերերը պետք է ստեղծեն բարենպաստ պայմաններ (սոցիալական, տեխնոլոգիական, կրթական) յուրաքանչյուր աշխատողի օպտիմալ վերարտադրության համար, առանց որի աշխատանքի չի կարող լինել տնտեսական աճ:

Պետությունը ձեռնարկատերերի և վարձու աշխատողների հարաբերություններում համակարգող դեր է կատարում: Այն պաշտպանում է մասնավոր սեփականության ինստիտուտը, որը հանդիսանում է առաջընթացն ապահովող շարժիչը: Դրա հետ մեկտեղ պետությունը հոգ է տանում նրանց մասին, ովքեր սոցիալական պաշտպանության կարիք ունեն, որի համար ստեղծվել են պետական սոցիալական ֆոնդեր: Սոցիալական պաշտպանության համակարգը տարածվում է բոլոր սոցիալական խմբերի վրա և ոչ թե միայն սոցիալապես անապահով: ՝Սոցիալական պետության՝ համակարգով հասարակության մեջ առաջանում է եկամուտների առավել քիչ շերտավորում, որը ապահովում է սոցիալական կայունություն և հասարակական հարաբերությունների ներդաշնակություն: Պետությունը ակտիվ քաղաքականություն է վարում նաև աշխատանքի ոլորտում: Պետությունն իր վրա է վերցնում արտադրության համար անհրաժեշտ մասնագիտություններին աշխատավորների ուսուցմանգործառույթը: Սոցիալ-դեմոկրատական իշխող կուսակցությունները իրագործում են հավասարության ապահովման տարբեր ծրագրեր առողջապահության, կրթության և այլ ոլորտներում:

Սոցիալ-դեմոկրատական հասարակությունների (Շվեդիա, Ավստրիա, Նորվեգիա, Շվեյցարիա և այլն) քաղաքական համակարգը հիմնված է հասարակական մակրոկոնսենսուսի (հիմնային արժեքների հանդեպ սոցիալական խմբերի համաձայնություն), իշխանության բաժանման և այլ սկզբունքների վրա: Հասարակական մակրոկոնսենսուսի սկզբունքի շնորհիվ պաշտպանվում են հասարակության սոցիալական տարբեր խմբերի և շերտերի շահերը: Դա պայմանավորված է հասարակության մշակութային նույնակերպության բարձր աստիճանով և արդարության, ազատության, դեմոկրատիայի իդեալների հանդեպ բնակչության կողմնորոշմամբ:

Սոցիալ-դեմոկրատների քաղաքականգաղափարախոսությունը և փորձը ստեղծեցին քաղաքական մշակույթի որոշակի տիպ, որի հիմքում ընկած են ռեալիզմը, այլախոհների հանդեպ համբերատարությունը, դեմոկրատիան, արդարությունը քաղաքական պայքարում և այլն:

գ) Ֆաշիզմ

Ֆաշիստականգաղափարախոսությունը ծագել է 20-րդ դարի 20-ական թվականներին: Նրա էվոլյուցիան, տարբեր երկրներում քաղաքական հարաբերությունների վրա ազդելու միջոցները նրա հանդեպ ստեղծեցին ոչ միանշանակ վերաբերմունք:

Այժմ քաղաքագիտության մեջ ֆաշիզմը երկու կերպ են հասկանում: Որոշգիտնականներ այն համարում են քաղաքականգաղափարախոսության մի տեսակ, որը կազմավորվել է Իտալիայում ,Գերմանիայում, Իսպանիայում 20-րդ դարի 20-30-ական թվականներին և այդ երկրներում հետպատերազմյան ճգնաժամից դուրսգալու միջոց է հանդիսացել: Ֆաշիզմի հիմնադիր է համարվում իտալական սոցիալիստների աջ թևի առաջնորդ Բ. Մուսոլինին: Նրա թեորիան, որը հիմնված էր Պլատոնի, Հեգելի էլիտարգաղափարների վրա, քարոզում էր ծայրահեղ նացիոնալիզմ, պետության անսահման իշխանություն և քաղաքականգործիչների էլիտարություն, փառաբանում էր պատերազմը և էքսպանսիան:

Ֆաշիզմի տարատեսակ էր նաև Հիտլերի նացիոնալ-սոցիալիզմը: Ֆաշիզմիգերմանական տարբերակը առանձնանում էր առավել հետադիմական իռռացիոնալիզմով (գերմանական միֆ), իշխանության ավելի բարձր տոտալիտար կազմակերպումով և բացահայտ ռասիզմով: Օգտագործելով Ա. Գաբինոյի՝ ռասայականգերազանցությանգաղափարները, ինչպես նաև Ի. Ֆիխտեի, Գ. Կրյոչկեի, Ա. Շոպենհաուերի, Ֆ. Նիցշեի որոշ թեզիսներ՝գերմանական ֆաշիզմի տեսաբանները կառուցեցին իրենցգաղափարախոսությունը միֆական ժողովրդի քաղաքական նգաղափարական առաջնության իրավունքի հիման վրա:

Ազգի դաստիարակության մեջ Հիտլերը մեծ նշանակություն էր տալիս մշակույթի և արվեստիգործիչներին, որոնք իրենց արվեստով պետք է ծառայեին նացիոնալիստականգաղափարախոսությանը:

Մշակութային սկզբունքի հիման վրա նրանք բոլոր ժողովուրդներին բաժանում էին 3 մասի՝ մշակութաստեղծ (համարում էինգերմանացիներին, անգլիացիներին և հյուսիսային Եվրոպայի ժողովուրդներին), մշակույթին աջակցող (համարում էին սլավոններին, Արևելքի ու Լատինական Ամերիկայի բնակիչների մի մասին), մշակույթն ավերող (համարում էին սեմամորթներին, հրեաներին,գնչուներին): Վերջին խմբին պատկանողներին պետք է անխնա վերացնել:

Ֆաշիզմի պատմական դրսևորումները կարելի է հանդիպել նաև ֆրանկիստական Իսպանիայում, Ճապոնիայում 30-40-ական թվականներին, Պորտուգալիայում Սալազարի, Արգենտինայում Պերոն (1943-1955) նախագահի օրոք, Հունաստանում 60-ական թվականների վերջին և այլուր: Նրա առավել բնորոշգծերը հանդես ենգալիս այնպիսիգաղափարախոսություններում, ինչպիսիք են նեոնացիզմը (հիմնված էր ռասայական մաքրության նգեր մարդու իդեալի սկզբունքի վրա), նացիոնալ-լիբերալիզմը և նեոֆաշիզմը:

Ֆրանսիացիգիտնական Ա. Միլզան առաջադրեց ֆաշիզմի զարգացման հետևյալ փուլերը՝

1. ֆաշիզմ, որըգոյություն ունի որպես ծայրահեղական շարժումների ճգնաժամի ձև, որըգրավել է փոքր բուրժուազիայի մի մասը, որն էլ հանդես էրգալիս կապիտալիզմի և ծայրահեղ աջ ուժերի դեմ,
2. ֆաշիզմը իշխանությանգրավման համար կապակցող դեր է կատարում մասնավոր սեփականության և մանր բուրժուազիայի միջև,
3. ֆաշիզմը դառնում է առանձնահատուկ քաղաքական վարչակարգ,
4. ֆաշիզմը ձեռք է բերում տոտալիտարիզմի ստադիա:

Այս էվոլյուցիոն պատկերը թույլ է տալիս ավելի ցայտուն նկատել ֆաշիզմի սպառնալիքները, որոնք առավել ակնհայտ են դառնում հատկապես անցումային հասարակություններում: Դրանցում ֆաշիզմիգաղափարները բնորոշվում են հատկապես օրենքների բացակայությամբ:

Այլ տեսակետի համաձայն ֆաշիզմը համարվում էգաղափարախոսություն, որը առաջանում է այն ժամանակ, երբ քաղաքական ուժերի առաջին նպատակն է դառնում դեմոկրատիայի վերացումը:

Ֆաշիստականգաղափարախոսության հետևանքով մեծանում է առաջնորդի պաշտամունքը: Ֆաշիստականգաղափարախոսությունը հիմնված է առասպելական կերպարի և նպատակի վրա, որի դեպքում հաստատվում է անընդհատ պայքար թշնամիների դեմ: Ֆաշիստականգաղափարախոսության ստեղծողները իրենցգաղափարները հիմնավորում էին մշակույթի ճգնաժամով: Նրանք իրենց համարում էին մշակույթը փրկողներ: Ըստ ֆաշիստականգաղափարախոսության՝ իրենցգլխավոր առաքինությունը մշակույթի փրկությունն էր և վերածնունդը:

գ) Անարխիզմ

Անարխիզմը քաղաքական ուղվածություն է, որիգլխավոր նպատակը պետության ոչնչացումն է և նրա փոխարեն քաղաքացիների ազատ միության ստեղծումը:

Անարխիզմիգաղափարները հայտնի են եղել դեռևս անտիկ և միջնադարյան մտածողների մոտ: Նոր ժամանակներում արտահայտվել է անգլիացիգրող ՈՒ. Գոդվինի՝Հետազոտություն քաղաքական արդարության մասինգրքում՝1793:

Որպես 19-րդ դարի 40-70-ական թվականներին ձևավորված քաղաքական ուղղություն անարխիզմը որպես նշված նպատակին հասնելու միասնականգաղափարախոսություն հանդես չի եկել: Առանձնանում են անարխիզմի 4 հիմնական ուղղություններ՝ ինդիվիդուալիստական, մութուալիստական, կոլլեկտիվիստական և կոմունիստական:

Ինդիվիդուալիստական անարխիզմի հիմքում ընկած էր մարդու բացարձակ ազատությանգաղափարը: Մարդն իր ցանկություններում և արարքներում չպետք է կապված լիներգոյություն ունեցող կրոնական դոգմաների, իրավական և բարոյական նորմերի հետ: Այս ուղղության հիմնադիրը համարվում է Մ. Շտիրները, որն ինդիվիդուալիստական անարխիզմի հիմնական թեորիաները ներկայացրել է իր՝Միակը և նրա սեփականությունը՝գրքում 184:

Ամփոփում

Գաղափարախոսությունները միշտգոյություն են ունեցել: Երկարատև գաղափարախոսությունը ստեղծում է մենթալիտետ, որը կարելի է համարել քաղաքակրթության ՝բնազդը՝: Գաղափարախոսությունը մարդուն հասարակություն ստեղծելու հնարավորություն է տալիս: Միևնույնգաղափարախոսությունը միավորում, իսկ տարբերգաղափարախոսություններ թշնամացնում են մարդկանց: Տարբերգաղափարախոսություններգործում են իրար զուգահեռ:

Գոյություն ունի հասարակականգաղափարախոսություն: Պատմական տարբեր դրաշրջաններում հասարակությունը կառավարել է կրոնական կամ քաղաքական ինստիտուտը, որի հետևանքով հասարակականգաղափարախոսության հիմքը եղել է կրոնական կամ քաղաքականգաղափարախոսությունը: Այժմ ևս որոշ հասարակություններ առաջնորդվում են կրոնական, իսկ որոշներն էլ՝ քաղաքականգաղափարախոսությամբ:

Յուրաքանչյուրգաղափարախոսություն ստեղծում է էթիկայի իր նորմերը:

Բոլորգաղափարախոսությունները իրենց սկզբնական շրջանում խիստ ծայրահեղ են լինում և մերժում են նախորդգաղափարախոսությունների նույնիսկ դրական կողմերը: Յուրաքանչյուր նորգաղափարախոսություն իր մեջ կրում է նախորդգաղափարախոսության տարրեր: Միգաղափարախոսությունից անցումը մյուսին երկարատև պրոցես է:

Յուրաքանչյուրգաղափարախոսություն ստեղծում է իդեալականի իր կերպարը: Կրոնականգաղափարախոսության մեջ այդ կերպարը կատարյալ էր: Լիբերալգաղափարախոսության իդեալական կերպարը մարդն էր: Այսինքն՝ այդ կերպարը պետք է անպայման ունենար թերություններ: Դա ստեղծում է ռեալիզմի ուղղությունը:

Կոնսերվատիզմի ստեղծած կերպարը համապատասխանում էր առասպելական կերպարին:

Յուրաքանչյուր քաղաքականգաղափարախոսություն ունի իր դրական և բացասական կողմերը:

Լիբերալիզմը մարդկությանը տվեց անհատական և մշակութային հանդուրժողականությունը, պլյուրալիզմը և այլն: Լիբերալիզմը խթանում է համասեռամոլության զարգացումը, որը աշխարհի դեմոգրաֆիական խնդիրը լուծելու հումանիտար տարբերակներից է:

Այժմ շատ երկրներ են հրաժարվել պետական կառավարման լիբերալ սկզբունքներից, սակայն այդ երկրներում էլ մշակույթի վրա լիբերալիզմի ազդեցությունը դեռ շատ մեծ է: Հասարակության կողմից լիբերալգաղափարների ընդունման մասին է վկայում 20-րդ դարի 60-70-ական թվականների մշակութային հեղափոխությունը:

Կոնսերվատիզմը , ճիշտ է, դանդաղեցնում է առաջընթացը, սակայն պահպանում է ավանդական մշակույթը, առանց որի չի կարող ստեղծվել նոր մշակույթ:

Աղբյուրներ և գրականություն

1. Артемов Г. П. Политическая социология, Москва "Логос", 2002:
2. Бердяев Н. А. Философия неравенства, Париж: YMCA-Press, 1990:
3. Видяпина В. И. Бакалавр экономики, lib.wsu.ru/books, 2002:
4. Избранные статьи. Либерализм. Ru.wikipedia.org., 01.04.2009:
5. Конграшов В. А. Человек и культура в идеологии немецкого национал-социализма, condra@inbox.ru, 02.04.2009:
6. Консерватизм, Энциклопедический философский словарь, dic.academic.ru, 01.04.2009:
7. Муравьев П. А. Современный либерализм и декаденство в Америке, www.russian-americans.org, 01.04.2009:
8. Политические идеологии, Society.polbu.ru, 10.11.2008.
9. Солонин Ю. Н. Философия и социально-политические ценности консерватизма в общественном сознании России, Санкт-Петербургский государственный университет, 2004:
10. Хаджиев Г. С. Полити1еская наука, М. 2001: